ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՆՆԴԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-21/1

ք.Երևան «16» « 12 » 2020թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայությանն կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «Ռեդի-Սթեդի» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Գայանե Մարգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Կատարող»), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 17.11.2020թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 7.5, 7.15 և 7.16 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ սննդի պատրաստման ծառայությունների ձեռքբերման համար նախատեսվել են 86800000 (ութսուվեց միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցներ և «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ի կողմից 15.12.2020թ.-ին ներկայացվել է թիվ 19534007370/12 կանխավճարի բանկային երաշխիքը, ուստի կողմերը որոշեցին՝ Պայմանագրով նախատեսել կանխավճար՝ 86800000 (ութսուվեց միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով և Պայմանագրում 4.1.1 կետը հաստատել նոր խմբագրությամբ՝

«4.1.1 Պայմանագրի գնից՝ 86800000 (ութսուվեց միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:»

1.2 Հաստատել Պայմանագրի N2 հավելվածը՝ «Վճարման ժամանակացույց»-ը, նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և իր N1 հավելվածը կազմված են 2 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 հավելվածը համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց-63	ՀՀ, ք. Երևան, Բուռնազյան-7
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011175016	Հ/Հ 220533332767000
ՀՎՀՀ 02204739	ՀՎՀՀ 00851011
ՔԿ ծառայություն	Տնօրեն՝
Ա.Ղազարյան	Գ.Մարգարյան
(ստորագրություն)	/ստորագրություն/
	Կ.Տ

Հավելված N 1
«16» «12» 2020 թ. կնքված N 1 Համաձայնագրի
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԾՁԲ-21/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Կանխավճարի վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			դեկտեմբեր	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	55321100/505	Սննդի պատրաստման ծառայություններ, թվով տասներկու ՔԿՀ-ներում	86800000	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն												

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՎՀՀ 02204739
ՔԿ ծառայության
Ա.Ղազարյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բուռնազյան-7
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220533332767000
ՀՎՀՀ 00851011
Տնօրեն՝
Գ.Մարգարյան
(ստորագրություն)
Կ.Տ